

ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐԸ ԿԱՐՆՈ ԲԱՐԲԱՌԻ ՄԻ ՔԱՆԻ

ԽՈՍՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Մարկոսյան Նարինե

ԵՊՀ, ԲՊՀ

narine.markosyan1977@mail.ru

DOI: 10.54503/978-9939-970-08-0-148

Սույն հոդվածում մեր նպատակն է անդրադառնալ Կարնո բարբառի մի քանի խոսվածքներին բնորոշ, ինքնատիպ, տվյալ տարածաշրջանի ժողովրդայնությունն ապահովող լեզվական անգերազանցելի միջոցների՝ դարձվածքների ուսումնասիրությանը:

Այդ նպատակով ընտրել ենք Վրաստանի Սամցխե-Ջավախք երկրամասի կազմի մեջ մտնող երեք տարբեր շրջաններ՝ Ասպինձայի շրջանի **Դամալա** (այն Ասպինձայի շրջանի կազմի մեջ մտնող 21 բնակավայրերից միակ հայկական գյուղն է), Ախալքալաքի շրջանի **Վաչխան** և Ախալցխի շրջանի **Օրալ** գյուղերը:

Ըստ Հ. Աճառյանի ձևաբանական միահատկանիշ դասակարգման՝ Կարնո բարբառը ընդգրկվում է Կը ճյուղում: Ըստ Գ. Զահուկյանի բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման՝ Կարնո բարբառը ներառվում է Փոքր Ասիայի կամ արևմտյան բարբառախմբում: Ըստ Ար. Ղարիբյանի հայերենի բարբառների հնչյունական դասակարգման՝ նշյալ բարբառի բաղաձայնական համակարգը քառաստիճան է և ընդգրկվում է 2-րդ տեղաշարժի երրորդ ենթակետում³:

Դարձվածքը փոխաբերական վերախմաստավորման ենթարկված կայուն բառակապակցության տեսակ է: Դարձվածքները

¹ Հ. Աճառյան, *Հայ բարբառագիտություն-Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների*, Մոսկվա-Նոր Նախիջևան, հ. Ը, 1911, էջ 104:

² Գ. Զահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 374:

³ Ար. Ղարիբյան, *Հայ բարբառագիտություն*, Ե., 1953, էջ 135:

առօրյա, ժողովրդախոսակցական ոճին բնորոշ բառային միավորներ են, որոնք յուրաքանչյուր ժողովրդի ազգային մտածողությունը, լեզվամտածողությունը դրսևորող լեզվական միջոցներն են, որոնց շնորհիվ արտահայտվում են տվյալ ժողովրդի բարքերն ու սովորույթը, կենցաղն ու ապրելակերպը, ինչպես նաև նրան բնորոշող հոգեկան, հոգեբանական խառնվածքն ու կենսափիլիսոփայությունը: Դրանք, լինելով նաև լեզվի պատկերավորման միջոցներ, խոսքին հաղորդում են պատկերավորություն, հուզական երանգավորում, միաժամանակ նպաստում խոսքի սեղմությանն ու հակիրճությանը:

Վերահայ տարածքի խոսվածքները ևս հարուստ են դարձվածքներով, թևավոր խոսքերով, առածներով ու ասացվածքներով, որոնց մի մասը ընդհանուր է գրական հայերենի և այլ բարբառների դարձվածքների հետ, իսկ մի մասն էլ յուրահատուկ է և հանդիպում է միայն այդ խոսվածքներում, այսինքն՝ հանդիպում են նեղ բարբառային դարձվածքներ, որոնք էլ կփորձենք առանձնացնել սույն հոդվածում: Մենք ընդգրկել ենք նշյալ տարածաշրջանների խոսքաշարից գրի առնված բազմաթիվ դարձվածային միավորներ, որոնք գործածում են տարբեր տարիքի եւ տարբեր սեռի բնակիչներ, սակայն դարձվածքների հաճախակի գործածությամբ առանձնանում են տարեցները:

Լեզվաբանության մեջ վեճերի տեղիք է տվել առածների, ասացվածքների, թևավոր խոսքերի՝ դարձվածքներ համարելու հարցը⁴: Սույն հոդվածում մենք դարձվածքները քննել ենք՝ ըստ

⁴ Ըստ Գ. Զահուկյանի, Է. Աղայանի, Պ. Բեղիրյանի՝ առածները, ասացվածքները, թևավոր խոսքերն ու արտահայտությունները դարձվածքներ չեն համարվում, տե՛ս **Գ. Զահուկյան, Էդ. Աղայան և ուրիշներ, Հայոց լեզու**, Ե., 1980, էջ 478: **Պ. Բեղիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն**, Ե., 1973, էջ 55, իսկ ըստ Լ. Եզեկյանի՝ դարձվածքային արտահայտություններ են, տե՛ս **Լ. Եզեկյան, Հայոց լեզվի ոճագիտություն**, Ե., 2007, էջ 184:

դարձվածքի բաղադրիչների սերտության աստիճանի, ըստ որի լեզվաբանության մեջ ընդունված է տարբերակել հետևյալ միավորները՝ **դարձվածքային սերտաձուռ, դարձվածքային միասնություն, դարձվածքային կապակցություն և դարձվածքային արտահայտություն**: Դարձվածքները հիմնականում կառուցվում են մարդու մարմնի մասերով և կոչվում **ստմասիկ** դարձվածքներ⁵:

Մարմնի մասերի անվանումները ոչ միայն բառապաշարի ակտիվ շերտի բաղադրիչներն են, այլև փոխաբերական նշանակությամբ լայնորեն գործածվում են խոսքում՝ կազմելով դարձվածային միավորներ: Սա ընդհանուր լեզվաբանական իրողություն է և ունի իր իրական հիմքերը. խոսքի պատկերավորության և արտահայտչականության համար յուրաքանչյուր ոք աշխատում է գործածել առավել մատչելի, առօրեական բառեր, իսկ դրանք ամենից առաջ մարմնի մասերի անվանումներն են, որոնցով կազմված դարձվածքները համընդհանուր են աշխարհի մի շարք լեզուներում, ուստի մենք էլ փորձել ենք ներկայացնել մարդու մարմնի մասերի անվանումներով բաղադրված դարձվածքներ՝ ըստ բաղադրիչների սերտության աստիճանի, այնուհետև առանձնացրել տվյալ տարածաշրջանին բնորոշ ասույթները, թևավոր խոսքերը, առածներն ու ասացվածքները:

Ա) **Դարձվածքային սերտաձուռներ կամ միակցություններ**. այս տիպի կապակցություններում դարձվածքի իմաստը զգալիորեն հեռու է իր բաղադրիչների բառային իմաստներից: Բառերը, ամբողջապես կորցնելով հանրորեն ընդունված իրենց բառային իմաստները և տվյալ կառույցում վերաիմաստավորվելով, դառնում են դարձվածքի սոսկ ընդհանուր, ամբողջական իմաստի բաղա-

⁵ Տե՛ս Ա. Սուքիասյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 1982, էջ 374 :

⁶ Լ. Շգեկյան, նշվ. աշխ., էջ 187 :

դրատարր՝ չցուցաբերելով իրենց բառային և իմաստային ինքնուրույնությունը: Այսինքն՝ դարձվածքի բաղադրիչ հանդիսացող յուրաքանչյուր բառ ոչ միայն չունի հանրորեն գիտակցված և ընդունված իր բառային իմաստը, այլև ընդհանրապես գուրկ է որևէ ինքնուրույն, առանձին բառային իմաստից:

Դարձվածաբանական սերտաճման օրինակներ՝ կազմված մարմնի մասերի անվանումներով՝ **բէյնէն թուլ, բէյնէն շննթ** **թափէլ, բերանը ցըգէլ, բէյնին լօ էնէլ, բերան-բերան ըսէլ, թուքը բերանը մօլըրիլ, բերանը մօմէլ, բերանը խէրօվ բանալ, ճօռթած բերան, լննթնօշ բերան, բէյնին քալ, որոնցից միայն տվյալ տարածաշրջաններին բնորոշ են՝ բէյնին քյննթ չունենալ** (ամեն ինչ ասել), **բերանը մօմէլ** (չխոսել) և **բէյնին լօ էնէլ** (անընդհատ ասել) (վերջինս գործածվում է միայն Դամալայի խոսվածքում)⁸, իսկ **բէյնին ննթնթ ն էրէլ** (անընդհատ ասել) դարձվածքը կիրառվում է միայն Օրալի խոսվածքում:

Երես բառով՝ երէսը պաղօշ, երես երեսի փերէլ, երես էլլէ, երես առնէլ, երեսանց ըսէլ/իմանալ, երեսանց ցույց տալ, իսկ երեսէն դարվեր հըլլըխտալ (հաճոյանալ) դարձվածքը գործածվում է միայն տվյալ տարածաշրջաններում:

Աչք բառով՝ ննկերը պաղիլ, ննկէն ընգընիլ, ննկը ծակ, ննկը կուշտ, ննկ էնէլ, ննկօվ տալ, ննկին կամ նչըջին ճիջուն կօղոէլ (վախեցնել), **Պ. Բեդիրյանի** բառարանում կա՝ **աչքի որդը կոտրելիօ**, որը նշանակում է նաև «մի քանի թոպեով քնել, հանգստանալ»,

⁷ Նշվ. աշխ., էջ 375:

⁸ Այսուհետ՝ ԴԽ:

⁹ Այսուհետ՝ ՕԽ:

¹⁰ **Պ. Բեդիրյան, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան**, Ե., 2011, էջ 1060, այսուհետ՝ ԴԸԲԲ:

անվրները /անկերը ջուր կըղռէ, անկիւումս էնէ, անկէն ցըգէ, անշվին կուլ էրթալ, իսկ անձկ խըմօղ (բարետես), անձկ բըռնօղ (բարետես), անշըվին բօխօլ (տգեղ աչքեր ունեցող) դարձվածքները բնորոշ են միայն տվյալ տարածաշրջաններին:

Ականջ բառով՝ անգաջը ձենի, անգըջին օղ էնէ, անգաջը լըցնէ, անգաջըդ կանչէ, անգըջին էտտին ցըգէ, անգաջ էնէ, անգաջը ընգավ, անգըջները ծանդըռնալ, անգաջը տանիլ, անգըջի պօջօվ/ծէրօվ իմանալ, սաղանին անգաջը խուլ և այլն, իսկ անգըջները թափէլ կամ անգաջը թափալ (հոգնել) դարձվածքը բնորոշ է միայն ԴԽ-ին:

Միրտ բառով՝ սըրդէն թուլ, սիրդը պաղդիլ, սըրդէն փուխ, սըրդօվ էրթալ, սըրդէն գըրցիլ, սիրդը քաշէլ, սիրդը լալ, սիրդը վառիլ-թափիլ, սիրդը լէն, սիրդը նէդ, իսկ սիրդը առալ (հագենալ) դարձվածքը բնորոշ է միայն ԴԽ-ին:

Քիթ բառով՝ քըթի մագ, քիթը խօթէլ, քըթէն բէրէլ/ փէրէլ կամ քըթէ փէրէլ, քըթէն մագ անցընէլ, քըթի ծակ չունէնալ, քըթէն մուխ էլնէլ, իսկ քըթին ջուրը քաշէլ (հոգ տանել) դարձվածքը բնորոշ է միայն մեր կողմից ուսումնասիրվող տարածաշրջաններին:

Ձեռք բառով՝ չօր ձեռք, ձեռքէն քալ, ձեռքէն հագար հինար քալ, առանձանանում են՝ ձեռքը մարդ (կամեցող), ձեռք վէրցընէլ (ցավակցել), վերջինս կիրառվում է միայն ԴԽ-ում, իսկ ձեռքին էրթալ (ցավակցել)՝ Վաչիանի¹¹ և Օրալի խոսվածքներում:

Ուտք բառով՝ օտկերուն թափը էրթալ, օտկէն գըլօխ խէլք, ծանդըռտօկ (հղի) ըլլի, օտկօվ-գըլխօվ կօրցըվիլ, վօտկ ցըգէլ, վօտկ վէրցընէլ, օտկերը յօղընին գէրան էրգընցընէլ, օտկին տըգի չամուտը չարժէլ և այլն, իսկ օտկին կացին ըլլիլ գարձվածքը բնորոշ է ԴԽ-ին,

¹¹ Այսույետ՝ ՎԽ:

որը նշանակում է «խանգարել», իսկ «խանգարել» իմաստով **վօսկ զոյնէ** դարձվածքը բնորոշ է ՎԽ-ին և ՕԽ-ին:

Գլուխ բառով՝ **գրլխուն զօռ տալ, գրլօխը քարը, գրլօխը փութըն ըլլի, գրլօխ հանել, իրար գրլխու լըցվի/ թօփ ըլլի, գրլխուն քալ, գրլօխը կուշտ ըլլի, գրլխուն մէջը չըտէղավօրվի**, առանձնանում են միայն տվյալ տարածաշրջաններին բնորոշ **գրլխուն թասը վերնալ** (զարմանալ) և **գրլխուն հէտ զօրծ չունի** դարձվածքները, վերջինս կիրառվում է Վաչիանի խոսվածքում, նշանակում է «հիմար»:

Ճակատ բառով՝ **Ճագդէն սնրսնմի** (հիմար), որը բնորոշ է միայն տվյալ տարածաշրջաններին, **Ճագդին/Ճագադին ըսել**:

Լեզու բառով՝ **անուշ լիզու, լիզու թափել, լիզու թաթխել, լիզու դընել/լեզու թընել, լիզվին զոռ տալ, լիզու առնել, լիզու էլնել**, իսկ **լիզուն լուր էնել** (լռել) դարձվածքը բնորոշ է ԴԽ-ին:

Բ) Դարձվածային միասնություններ. այս դեպքում դարձվածքի իմաստը հնարավոր է վերականգնել՝ ելնելով բաղադրիչների իմաստից¹², այս դեպքում դարձվածքի իմաստը բխում է առանձին բաղադրիչների բառային իմաստների միավորումից: Դարձվածքների այս խմբին բնորոշ է պատկերավոր իմաստը, որով և տարբերվում են նույն կազմությունն ունեցող բառերի ազատ կապակցությունից:

Ներկայացնենք **դարձվածային միասնության** խմբի մեջ մտնող դարձվածքների օրինակներ՝ կազմված մարմնի մասերի անվանումներով:

Բերան բառով՝ **բէյնին քալ, բերանը բաց, բերանը յարա բուսնել, բերանը բաց մընալ**:

¹² Հմմտ. **Պետրոսյան Հ.**, *Հայերենագիտական բառարան*, Ե., 1987, էջ 175-176, **Բեղիբյան Պ.**, նշվ. աշխ., էջ 5-12:

Երես բառով՝ երեսին մուր քըսել, երեսին հարսի քօղ ցըգել կամ երեսին ֆսրդա քաշել, երեսը դեմ տալ, երեսը բուռը առնել, երեսին թօզ փըշել, երեսին ուննգը երթալ:

Բերան և երես բառերով կազմված դարձվածային միասնությունն օրինակներ, որոնք բնորոշ են միայն տվյալ տարածաշրջաններին, չեն հանդիպել:

Աչք բառով՝ անկ փակել/գօցել անկը շօռ, անկ անցընել, անկերը կըպչիլ, անկերուն թօզ փըշել, անկերը չօրնալ, անկերը չըռել, անկ բանալ, անկը բաց, անկերը խուփ, գեշ անկ ունենալ (չար աչք ունենալ), վերջինս կիրառվում է միայն տվյալ տարածաշրջաններում:

Ականջ բառով՝ անգաջը կախ, անգաջը լըցնել, անգաջը կըդռել, անգըջները բամբակ կօխել, բամբակը անգըջներեն հանել, անգըջին ֆսրդեն պատռել, անգըջները սուր և այլն: Անգաջը նըշնել (նշանադրել) դարձվածքը հոմանիշ է անգաջը կըդռել դարձվածքին և կիրառվում է միայն այդ տարածաշրջաններում:

Միրտ բառով՝ սըրդեն արուն կաթել/երթալ, սիրդը կպչիլ, սըրդին յարեն/յարան բուծել:

Քիթ բառով՝ քիթը խօթել, քըթին կըպչիլ, քիթը վեր տընկել, քըթի ծակ չունենալ, քըթեն զըրցիլ և այլն:

Ձեռք բառով՝ ձեռքերը կեռալ կամ ձեռքը քօր քալ, ձեռվըները ծալել կամ ձեռվին ծալել, ձեռվին/, ձեռքերը չուլ ըլլիլ (թուլանալ), ձեռքի քալ, ձեռք ցըգել, ծանդըռ ձեռք:

Ոտք բառով՝ օտկի տակ երթալ, օտկերը պաքնել, օտկերը ընգնիլ, օտկեն գըլօխ չափել, օտկին տագը փօրել և այլն:

Գլուխ բառով՝ գըլխեն վեր, գըլխուն պաղ ջուր լըցնել:

Ճակատ բառով՝ ճագադը դեմ տալ, ճագադը պաքնել, ճագադը բաց:

Լեզու բառով՝ լիզուն քաշել:

Միրտ, քիթ, ձեռք, ոտք, գլուխ, ճակատ, լեզու մարմնամասերի անվանումներով բաղադրված և միայն տվյալ տարծաշրջաններին բնորոշ դարձվածային միասնության օրինակների չենք հանդիպել:

Վիզ բառով՝ ճիդը ծուռ, ճիդը ցրգել, ճիդը պօպգել, ճըդէն բըռնել, ճիդը երգընցընել, ճիդը փօրին տակը մընալ (մահանալ), վերջինս հանդիպում է միայն մեր կողմից ուսումնասիրվող տարածաշրջաններում, ԴԸԲԲ-ում հանդիպել ենք վիզը փորից տուրս քաշել, որ նշանակում է «սպանել»¹³:

Գ) Դարձվածային կապակցություն. տվյալ արտահայտություններում սերտաձման աստիճանը բավական թույլ է, և բաղադրիչները գրեթե պահպանում են իրենց ուղղակի իմաստները, այսինքն՝ դարձվածքի իմաստը լիովին հասկացվում է բաղադրիչների իմաստից, թեև բաղադրիչները իմաստաբանորեն միմյանց նկատմամբ մնում են կախյալ վիճակում¹⁴, ինչպես՝ **գըլօխը կախել, գըլօխը ջարթել, ձեռվըները թուլանալ, ճագդին թըքնել, քիթը կախել, քիթը ջարթել, առգեստանը/առգաները թափել, օտկերը կամ օդըվըները ծալվիլ, մադըվըները անկը կօխել, անկերը խախցընել, անկերուն լուսը քօռանալ:**

Միայն ուսումնասիրվող խոսվածքներին բնորոշ դարձվածային կապակցության օրինակներ չեն հանդիպել:

Իբրև յուրահատուկ տեսակ՝ ընդունված է առանձնացնել նաև դարձվածային արտահայտությունները, որոնք ակնհայտ փոխաբերական, այլաբերական ու պատկերավոր իմաստ ունեցող կայուն կապակցություններ են, դրանց բաղադրիչների սերտաձումը, սակայն, գրեթե բացակայում է: Դարձվածային արտահայտություն

¹³ Պ. Բեդիրյան, նշվ. աշխ., էջ 1239:

¹⁴ Հ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 176:

ասելով՝ սովորաբար հասկանում ենք թևավոր խոսքերը, սպառնալիկան փաղաքշական արտահայտությունները, մաղթանքները, օրհնանքներն ու անեծքները, առածներն ու ասացվածքները:

Սույն հոդվածում մենք առանձնացրել ենք՝

ա) թևավոր խոսքերը,

բ) անեծքները, օրհնանքները, մաղթանքները, հանդիմանական խոսքերը,

գ) առածներն ու ասացվածքները:

Թևավոր խոսքերը դասակարգել ենք ըստ բաղադիրչների թվի՝ երկանդամ, եռանդամ, քառանդամ և այլն, ապա խմբերը բնութագրել ըստ խոսքիմասային կաղապարների: Նույն սկզբունքով դասակարգել ենք անեծքները, օրհնանքները, առածներն ու ասացվածքները:

ա) Թևավոր խոսքեր

1. երկանդամ կաղապարներ

Գոյական + բայ՝ քարերեն քազվիլ (ժլատություն անել), փեշեկօրած (աչքը դրսերում), քյսբսբ ըլլիլ (տանջվել), խսնջիլըն ընգընել (կրակն ընկնել), աղլաղը լըցնել (ուղեղը լցնել, հասկացնել), բայրաղ ըլլիլ (խայտառակվել), ԴԸԲԲ-ում կա բայրաղը վի թողնիլ, որը նշանակում է «հանձնվել, նահանջել»¹⁵, բողազը պադոել (գոռգոռալ), սսբսբ ըլլիլ (միջնորդ լինել) հավգիթ խուզող (ժլատ), պարուղը պարբիլ (սպառվել), դսքի բերել (գլխին խաղ խաղալ):

Ածական + բայ՝ ալիհեյբսթ կըլմանի (անչափ տգեղ), քիսբսթ կըլմանի (գեղեցկուհի, անթերի), գսլսլմսնգ կըլմանի (միամիտ):

Ածական + գոյական՝ անուշ օրթունք (ասում են թոռանը՝ քաղցր որդ), վերասյա մարթ (հիմար մարդ), պաղյավա էշ (ձրի

¹⁵ Պ. Բեդիրյան, նշվ. աշխ., էջ 219:

աշխատող), քոռ Բինո (չտեսնող), գնվնգն շուն (շատախոս), թնվնքնլի մարթ (տարօրինակ մարդ), խաս ախճիկ (գեղեցկուհի, շքեղ արտաքինով), տնմնզլըղ մարթ (լավ սերունդ տվող), առսըզ մարթ (կատաղած, կռվարար, անվախ):

Գոյական + գոյական` դնրդի կըծիկ (դարդերի մեջ կորած), կուռկուռի ձաք (կծկված), Կօսունի առչ (հաղթանդամ, տգեղ արտաքինով), փեթկի սախա (անբան, չաշխատող), ննմըզը տեղը (տրամադրությունը տեղը):

Խոսվածքներում հաճախադեպ են թյուրքական լեզուներից առաջացած **mis** ածանցով¹⁶ և հայերեն **էնել** (անել), **ըլիլ** (լինել) բայերով կազմված դարձվածքները` **բայանուն+էնել/ըլիլ`** խօրօզլամիշ ըլիլ (աքլորոնալ), դնրթլմիշ ըլիլ, Ֆըռլթմիշ էնել (նետել), չանթնլնմիշ ըլիլ (անընդհատ դրսերում լինել), մնլնլմիշ ըլիլ (տանջվել), գյնռլնմիշ ըլիլ (պառկել հանգստանալ), իլմիշ ըլիլ (հոգնել):

2. Եռանդամ կաղապարներ

Գոյական + գոյական + բայ` օյննկ-օյննկ զըրցիլ» (հիմարաբար խոսել), մըրզըղին ծերը հանել (անարգել), հօգու մարագ ըլիլ (հոգուցավ, հիվանդություն լինել):

Գոյական + բայանուն + բայ` օրթեցեն փնթլնմիշ ըլիլ (մեջտեղից կիսվել, նյարդայնանալ), սիրդըս թնլնշմիշ կլիլ (տակնուվրա):

Ածական + ածական + բայ` սարսաղ-սարսաղ դուս տալ (հիմարաբար խոսել), դօլայ-դօլայ զըրցիլ:

¹⁶ Տե՛ս, **Մ.Հ. Քոչար, Թուրքաբանությունները պոլսահայ բարբառում**, Ե., 1970, էջ 421:

Գոյական + մակբայ + բայ՝ ջուրը դարվեր էրթալ, խելքէն դարվեր բօռալ:

Գոյական + կապ + բայ՝ սնվանդի պէս բօյօվնալ (սյան պէս երկարել), մալի պէս բօռնչել:

Ձայնարկություն + դերանուն + գոյական՝ ա՛յ քեզի լաթա-
ռա/լաթառէ (այ քեզ պատուհաս):

Դերանուն + մակբայ + դիմավոր բայ՝ եղօր առաջն անցել է
(չափերն անցնել, ոչ մի բանից չվախենալ):

Մակբայ + դերբայ + գոյական՝ դուս զարկած իշան:

Գոյական + դերբայ + գոյական՝ մըրսօցը/մըրսութը կաբած յեզ:

Գոյական + վերաբերական + օժանդակ բայ՝ Բարսէղ իօ չէս (հո
հիմար չէ՞ս), մագարաթ իօ չէ՞ս:

3. Քառանդամ կադապարներ

Ձայնարկություն + վերաբերական + գոյական + օժանդակ բայ՝
Ծ՛օ իօ մագարաթ չէս¹⁷:

4. Հնգանդամ կադապարներ

Դերանուն + շաղկապ + գոյական + գոյական + բայ՝ էսմանէ
(այսպէս էլ) հօգու մարազ ըլլի:

բ) Անեծքները, մաղթանքները, օրհնանքները, հանդիմանա-
կան խոսքերը, որոնք պատկերավոր բնույթ ունեն և փոխաբերական
իմաստ ստանալով՝ վեր են ածվել դարձվածքների, կամ էլ որոշ
դարձվածքներ կիրառվում են որպէս օրհնանքներ, անեծքներ,
հանդիմանական խոսքեր:

1. Երկանդամ կադապարներ

Ածական + գոյական՝ քօռ միրաթ, լալ միրաթ, անդէր միրաթ:

Մակբայ + բայ՝ դմրբէդմրբ ընկնիս:

¹⁷ Դարձվածային կադապարներում բաղադրյալ ստորոգյալի մաս կազմող հան-
գույցը (օժանդակ բայը) դիտել ենք որպէս առանձին բաղադրիչ:

Մակբայ + ածական՝ օրպագաս անտէր:

Գոյական + բայ՝ ջանդանկըդ բերէն, ջանդանկըդ երգըննա:

Ածական + բայ՝ սեւ ըլլէիր:

Բայ + բայ՝ արքիս-խընդաս:

Դերբայ + գոյական՝ սատկելու միրաթ:

Գոյական + գոյական՝ կօնդէ գըլօխ:

2. Եռանդամ կադապարներ

Ձայնարկություն + գոյական + գոյական՝ ա՛յ ֆօղը գըլխուդ:

Ածական + գոյական + դիմ. բայ՝ սև կուրփին դընէմ, ոջաղ մանչըմ փերէս:

3. Քառանդամ կադապարներ

Գոյական + գոյական + կապ + դիմ. բայ՝ Ճիդըդ փօրիդ տակը մընա:

4. Հնգանդամ կադապարներ

Ձայնարկություն + գոյական + դերանուն + գոյական + գոյական՝ ա՛յ ձունը քու մալ գըլխուդ:

գ) Առածներ, ասացվածքային արտահայտությունները, որոնք վեր են ածվել դարձվածքների. ինչպես՝

1. Եռանդամ կադապարներ

Գոյական + կապ + բայ՝ «Փարէստընուն մէջը լօղալ/փարաներուն»:

Գոյական + մակբայ + դիմավոր բայ՝ «Յիգնությանը իրիգօրուք կը պառգի¹⁸» (ժլատ, գծուծ):

2. Քառանդամ կադապարներ

Գոյական + բայ, գոյական + բայ՝ «Թընդրին եփել, շըրթին ուտել» (առանց ուրիշին մասնակից դարձնելու եփել, ուտել), «Օցին

¹⁸ Դարձվածային կադապարներում բաղադրյալ դիմավոր ժամանակաձևեր կազմող օժանդակ բայը որպես ինքուրույն բաղադրիչ չենք համարել:

թըքնէ, խավը կուդա» (նախանձ մարդ):

Գոյական + ածական, գոյական + ածական՝ «Օրքէն չուստ, խելքէն թէթել» (ոտքից արագ, խելքից՝ թեթև):

Ածական + գոյական + կապ + դիմավոր բայ՝ «Հալալ մալիդ պէս կի /կէ» (իր ունեցածից օգտվել):

Ղերանուն + գոյական, դերանուն + գոյական՝ «Վէլ հարս, ինքը հարսնախալէր/հարսնախալար»:

Մակբայ + բայ, մակբայ + դիմ. բայ՝ «Ուշ էգավ, թեգ տիրաբտեց» (ուշ եկավ, ամեն ինչին տիրացավ):

Գոյական + կապ + գոյական + բայ՝ «Բնգին հէտ բաջանաղ ըլլիլ» (լավ թիկունք ունենալ):

Գոյական + գոյական + ածական + գոյական՝ «Շանը յաթաղը մանրուն հաց» (ծրի ուտող):

Գոյական + դիմ. բայ, գոյական + դիմավոր բայ՝ «Շուն կըլլիս, տէրտէր չէս ըլլի»: «Պօջը խուզել, օջիւրներուն ան խառնվել» (երիտասարդացել):

Գոյական + ածական + գոյական + դիմ. բայ՝ «Փարէն/փարան խէդ աղվէս է դարձի » (փող չկա):

Գոյական + գոյական + դիմ. բայ, դիմավոր բայ՝ «Մեռելին ջագդին զարգէս, սաղնա կը» (շատ չոր):

Գոյական + գոյական + մակբայ + բայ՝ «Բօշին դնգինանկ վրա չի քա» (անընդհատ դրսերում լինել):

Ածական + գոյական + գոյական + բայ՝ «Թօփալ (կաղ) իշօվ քննրվընին խառնըվիլ»:

3. Հնգանդամ կաղապար

Գոյական + գոյական, գոյական + շաղկապ + գոյական՝ «Շունը՝ շէմը, հարս ու կէսուր» (հարսը դաստիարակվում է սկեսրոջ օրինակով):

Դերանուն + շաղկապ (յօ-որ) + դիմ. բայ, մակբայ + դիմ. բայ`
«Քեզիյօ կայեմ, մօլօքվօր կըլլիմ»:

Գոյական + դիմ. բայ, դիմ. բայ + գոյական + դիմավոր բայ`
«Էրեսին թըքնեն կը, կըսս/կըսէ թոն քուքա»:

Շաղկապ + գոյական + դիմ. բայ, շաղկապ + գոյական` «Նսն
ռանդայա տեսսի, նայէ քէշդիրա» (անտաշ):

4. Վեցանդամ կադապարներ

**Գոյական + գոյական + մակբայ + դերբայ + գոյական + օժանդակ
բայ`** «Զարնրին կեսէն յետ դառնալը իւեր ան» (վնասի կեսից ետ
դառնալը իւեր է):

**Դերանուն + շաղկապ (օ-որ) + դիմ. բայ, մակբայ + մակբայ + դիմ.
բայ`** Քեզիօ տեսնիմ կը, վրէս վեր կուդա» (փշաքաղվել):

5. Յոթանդամ կադապարներ

**Գոյական + շաղկապ + գոյական + դիմ. բայ, գոյական + գոյական
+ դիմ. բայ`** «Թշնամին օ տընէն ըլլի, յէզը էրթիքեն կելլէ»:

**Գոյական + կապ + գոյական + գոյական + շաղկապ + մակբայ +
օժանդակ բայ`** «Տանը մէջ տղամարդու շուքն է(ստվեր էլ) հերիք է»:

**Գոյական + գոյական + կապ + գոյական + դիմ. բայ + գոյական +
դիմ. բայ`** «Դարդ դարդի վրա Պըռկօշը պառկել մանչ է փերել» (միայն
սա էր պակաս):

6. Ութանդամ կադապարներ

**Գոյական + մակբայ + գոյական + օժանդակ բայ, շաղկապ +
գոյական + ածական + օժանդակ բայ`** «Քօռին շատ պետքն է, տը մօմը
թանկ է»:

Ամփոփելով, կարող ենք նշել, որ մեր կողմից ուսումնասիրվող
վիրահայ տարածաշրջաններն աչքի են ընկնում դարձվածքների
առատ գործածությամբ, որոնք էլ փորձել ենք առանձնացնել սույն

հողվածում: Մարմնամասերի անվանումներով բաղադրված դարձվածքները ներկայացրել ենք ըստ բաղադրիչների սերտության աստիճանի, այնուհետև առանձնացրել միայն տվյալ տարածաշրջաններին բնորոշ թևավոր խոսքերը, օրհնանքները, անեծքները, հանդիմանական, փաղաքշական արտահայտությունները, առանձինն ու ասացվածքները: Ուսումնասիրությունից նկատելի էր, որ գյուղերի ավագագույն սերունդն է ավելի հակված այս դարձվածքների գործածությանը, ավագ սերունդը նույնպես գործածում է՝ ի տարբերություն երիտասարդների, իսկ միջին սերունդը ավագների համեմատությամբ՝ ավելի պակաս, իսկ երիտասարդների համեմատությամբ՝ ավելի հաճախ:

Markosyan Narine-Abstract Idioms in Some Speeches of Karin Dialect.-The purpose of this article is to speak about the study of idioms, unique linguistic means that are characteristic of several speeches of the Karin dialect and ensure the popularity of the given region. For this purpose, we have selected three different regions within the Samtskhe-Javakheti region of Georgia, i.e Damala in the Aspindza region (it is the only Armenian village out of 21 settlements within the Aspindza region), Vachiyani in the Akhalkalaki region, and Oral in the Akhaltsikhe region.

As a result of the study it becomes clear that the Georgian-Armenian regions are notable for their abundant use of idioms, which we have tried to highlight in the present article. We have presented the idioms composed of the names of body parts according to the degree of closeness of components, then we have highlighted the winged words, blessings, curses, reprimands, flattering expressions, proverbs and sayings typical of only the given regions.

It was noticeable that the eldest generation in the villages is more inclined to use these expressions, the elder generation also uses them in comparison with the younger generation, and the middle generation uses them less than the elder generation, but more often than the younger generation.

Keywords and expressions: the Karin dialect, Ky branch, Damala, the speeches of Oral, Vachian villages, phraseological fusion, phraseological unity, phraseological connection, phraseological expressions, winged words, proverbs, sayings.

Маркосян Нарине- Фразеологизмы в некоторых разновидностях каринского диалекта. -В данной статье мы обращаемся к исследованию уникальных, непревзойденных языковых средств - фразеологизмам, характерным для нескольких диалектов Каринского диалекта и обеспечивающим популярность данного региона.

Для этого были выбраны три населенных пункта Самцхе-Джавахкского региона Грузии: село Дамала области Аспиндза (единственное армянское село из 21 населенного пункта этой области), село Вачиан Ахалкалакского района и село Орал Ахалцихского района.

В статье мы постарались осветить исследование, из которого становится ясно, что армянские районы Грузии отличаются богатым употреблением словосочетаний. Мы представили фразеологизмы со словами, называющими части тела, по степени близости компонентов, а затем выделили только крылатые слова, благословения, проклятия, укоризненные, ласкательные выражения, пословицы и поговорки, характерные для данного региона. Было заметно, что самое старшее поколение сел более склонно к использованию этих выражений, старшее поколение также употребляет их в отличие от младшего, среднее поколение – реже по сравнению со старшими и чаще по сравнению с младшими.

Ключевые слова и выражения: Каринский диалект, ветвь Чр, наречия сёл Дамала, Орал, Вачиан, фразеологическая конвергенция, фразеологическое единство, фразеологическое сочетание, фразеологические обороты, крылатые слова, пословицы, поговорки.